



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ»

«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՎԱՐԴԱՆԻՁՈՐԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

«Ղարագույյաններ» ՓԲԸ-ն ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամասի ՇԱԹ-29/547 ընդերքօգտագործման իրավունքը ձեռք է բերել 25.10.2016թ: Ըստ Ընկերության ԱՃԹՆ շրջանակներում ներկայացրած հաշվետվությունների՝ 2016-2018թթ. արդյունահանում չի իրականացրել Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամասից:

Ընդերքօգտագործման պայմանագիրն է 25.10.2016թ. N Պ-547, հանքավայրի հատկացված տարածքը՝ 209,9 հա, արդյունահանման տարեկան թույլատրված ծավալը՝ 150,0 հազ. տ: Թույլտվությունը տրված է մինչև 25.10.2053թ.: Հանքավայրի հաստատված պաշարներն են՝ հանքաքար՝ 5471,9 հազ. տ, ոսկի՝ 17115.30կգ, արծաթ՝ 311,46 տ, պղինձ՝ 41654,9 տ. ցինկ՝ 115029,65 տ, կապար՝ 61905,48տ: 2016թ. 2017թ. և 2018թ. Ընկերությունում զբաղվածների թիվը կազմել է 1 մարդ:

ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը «Ղարագույյաններ» ՓԲԸ-ն ՀՀ շրջակա միջավայրի նախարարարություն է ներկայացրել 02.06.2016 թվականին: Ըստ հայտի՝ արդյունահանված հանքաքարը նախատեսվում է վաճառել համապատասխան վերամշակող կազմակերպություններին: Պահանջարկի բացակայության դեպքում հանքաքարը հետագա վերամշակման նպատակով նախատեսվում է տեղափոխել Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննական եզրակացությունը բացակայում է Շրջակա միջավայրի (ՇՄ) նախարարության պաշտոնական կայքում: Այն կորցրել է իր ուժը, քանի որ փորձաքննական եզրակացությամբ նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվել փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ համաձայն «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի:

Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքերնակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու համար Ընկերությանը 2016թ-ի հոկտեմբերի 25-ին երեք տարի ժամկետով տրամադրվել էր օգտակար հանձոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/229 թույլտվությունը: Սակայն ՏԿԵ նախարարը 2019թ-ի հոկտեմբերի 22-ի 496-Ա հրամանով մերժել է Ընկերության երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/229 թույլտվության ժամկետը երկարացնելու վերաբերյալ 25/09-01 դիմումը: Մերժման պատճառը եղել է այն, որ 2016թ-ի հոկտեմբերի 25-ի թիվ Պ-229 պայմանագրի N 1 հավելվածի ժամանակացույցով նախատեսված աշխատանքների մի մասը կատարել է մասամբ, իսկ ժամանակացույցի 8-րդ կետով սահմանված «ստորգետնյա լեռնային փորվածքի անցում»-ն ընդհանրապես չի կատարել՝ խախտելով պայմանագրի 4.4.1 կետի պահանջը: Ընկերությունը բողոքարկել է նախարարի հրամանը, որի շրջանակներում ՏԿԵ

նախարարի 2019թ-ի դեկտեմբերի 13-ին 697-Ս հրամանով հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունն աշխատանքների չկատարելը բացատրել է նրանով, որ բազմիցս դիմել է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով փոխել 17,53 հա հողատարածքի նպատակային նշանակությունը: Գործընթացի ձգձգման հետևանքով հետաձգվել են նաև շինարարական աշխատանքները ստորգետնյա հանքում: Առաջարկված 2019-2021թթ. ծրագրով Ընկերությունը նախատեսել է հետախուզման ավելի խիտ ցանցով շարունակել ուսումնասիրությունն առանձնացված տեղամասերում՝ նախկինի համեմատ առավել մեծ ծավալի հորատման աշխատանքներ նախատեսելով: ՏԿԵ նախարարը 2020թ-ին հունվարի 23-ի N 82-Ս հրամանով մերժել է Ընկերությանը՝ հիմնավորելով, մասնավորապես, որ թույլտվության գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգումը պայմանավորված է ընդերքօգտագործողի կողմից պայմանագրային պարտականությունների կատարման խախտմամբ¹:

Ազդակիր համայնքի մասին

Գործունեության ազդակիր համայնքն է Մեղրին /Վարդանիձոր, Այգեձոր, Թխկուտ, բնակավայրեր

Վարդանիձոր բնակավայր

Մեղրի խոշորացված համայնքի Վարդանիձոր բնակավայրը, որի մեջ ներառված են Թխկուտ և Այգեձոր գյուղերը, ազդակիր է Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքին: Այս գյուղն ազդակիր է նաև Լիճքվազ թեյի ոսկու հանքավայրին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Լիճքվազ» ՓԲԸ-ին, Մեղրասարի ոսկու հանքավայրին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ատ-Մետալս» ՍՊԸ-ին: Այն ազդակիր է նաև Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ին:



Նկար 1. Վարդանիձոր բնակավայր

Ըստ Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ որպես Վարդանիձոր բնակավայրի բնակչության ընդհանուր թիվ նշված է 347, որից 167 տղամարդ և 180 կին: Սյունիքի մարզպետարանի կայքում Մեղրի խոշորացված համայնքի բնակիչների

¹ <http://www.mtad.am/files/legislation/643.pdf>

թվում նշված է, որ Վարդանիձորի բնակիչների թիվը 152 է, Այգեձորի բնակիչների թիվը՝ 2, իսկ Թխկուտինը՝ 67: Ըստ Լեիվազի և Վարդանիձոր բնակավայրերի ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Վարդանիձորի բնակչության թիվը 255 է, որից 99-ը տղամարդ, 156-ը կին: Այգեձորում կա 1 տնտեսություն, իսկ Թխկուտում 8: Գործում է «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ 44 աշակերտով: Գործում է 1 մանկապարտեզ, որն ունի 12 սան: Վարդանիձոր բնակավայրի հողերի մակերեսը կազմում է ընդամենը 9312 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5176 հա, որից՝ վարելահող՝ 125 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 1468 հա, այլ հողատեսք՝ 3567 հա, բնակավայրերի հողեր՝ 54 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4002 հա, անտառային հողեր՝ 36 հա, որից անտառածածկ՝ 1 հա, ջրային հողեր՝ 7 հա: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ, մեղվաբուծությամբ:

Մեղրի համայնք

Մեղրի քաղաքի բնակչության ընդհանուր թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3380 մարդ (իգական՝ 2095, արական՝ 1285), նպաստառուների ընդհանուր թիվը՝ 135, որից ընտանեկան նպաստառուների թիվը՝ 77, գրանցված գործազուրկների թիվը՝ 142: Ունի 2 միջնակարգ դպրոց նախատեսված 1351 տեղի համար, ներկայումս այնտեղ հաճախում է 536 աշակերտ: Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կենտրոնական մասնաձյուղը, որտեղ հաճախում է 250 սան: Գործում է «Մեղրիի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ը, որտեղ փաստացի հաճախում է 107 աշակերտ: Մեղրիում գործում է մեկ միջնակարգ մասնագիտական ԲՈՒՀ՝ Մեղրու պետական քոլեջը, որն ունի 177 ուսանող: Շենքը նախատեսված է 200 ուսանողի համար:



Նկար 2. Մեղրի քաղաքային համայնք

Առողջապահական միակ հիմնարկը՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն է, ստեղծվել է 2010 թվականին «Ագարակի հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միավորման արդյունքում: Կենտրոնը մատուցում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապօգնության ծառայություններ: Քաղաքում գործում են «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն, որն արտադրում է մուրաբա, ջեմ, օշարակ, բնական հյութ, կոմպոտ և «Մեղրու գինու գործարան» ԲԲԸ-ն, որն արտադրում է խաղողի և նռան գինի: Մեղրի համայնքի գյուղատնտեսության առաջատար

ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը: Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նռան, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև կիվիի և ձիթապտղի մշակությունը: Համայնքում մասամբ զբաղվում են նաև անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ: Համայնքն ունի առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ հիմնախնդիրները՝

1. Չնայած համայնքի տարածքում հանքարդյունաբերության զարգացման մեծ ծավալներին և տնտեսական շահութաբերությանը, դրա զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման:

2. Համայնքում բացակայում է գյուղատնտեսական շուկան, և դրա բացակայությունը բացասաբար է անդրադառնում պտղաբուծությամբ զբաղվողների արտադրանքի սպառման վրա:

3. Չկան համայնքի բնակավայրերը կենտրոնին և միմյանց կապող միկրոավտոբուսային երթուղիներ, և այս հանգամանքը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակիչների շրջանում: Մեղրի քաղաքի շատ բնակիչներ ունեն սեփականության կամ վարձակալության իրավունք գյուղերի մեծաքանակ հողամասերի նկատմամբ: Սակայն տրանսպորտային երթուղիների բացակայությունը և տեղաշարժման դժվարությունները հնարավորություն չեն տալիս դրանց օգտագործումը:

4. Համայնքում մարզադահլիճի բացակայությունը խոչընդոտում է մարզական կյանքի լիարժեք զարգացմանը:

5. Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհները մեծ մասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում:

«Ղարագուլյաններ» ՓԲԸ –ի իրական սեփականատերերի մասին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքի²՝ «Ղարագուլյաններ» ՓԲԸ –ն գրանցվել է 03.10.2016 թվականին: Ընկերության առաջին իրական սեփականատերն է ՀՀ քաղաքացի Լևոն Ղազազյանը, ով 21.11.2015 թվականից 525 բաժնետոմսով տիրապետում է 25% բաժնեմասին: Նա միաժամանակ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է:

Երկրորդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Արմանուշ Գալստյանն է, ով 11.12.2015 թվականից 725 բաժնետոմսով տիրապետում է Ընկերության 35% բաժնեմասին:

Երրորդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Ռոլանդ Ղոնյանն է, ռեգիստրում բացակայում են նրա մասնակցության չափի մասին տվյալները: Ռոլանդ Ղոնյանը Ընկերության N2 իրական սեփականատեր Արմանուշ Գալստյանի ամուսինն է:

Չորրորդ իրական սեփականատերը ՌԴ քաղաքացի Ռաֆայել Հայրապետյանն է, ով 03.07.2019 թվականից 840 բաժնետոմսով տիրապետում է բաժնեմասերի 40 %-ին:

Հայտարարագրում միջանկյալ ընկերությունների կամ փոխկապակցված անձանց մասին նշումներ չկան:

² <https://www.e-register.am/am/companies/1267820>

2. «Ղարագույաններ» ՓԲԸ-ի ստանձնած պարտավորություններն՝ ըստ 25.10. 2016թ. N Պ-547 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններն են՝

ա) Ամեն տարի հատկացնել 0,5 միլիոն դրամ մանկապարտեզի և դպրոցների շենքերի վերանորոգման համար

բ) Ցուցաբերել 0,25 միլիոն դրամի օժանդակություն մեկ ուսանողի կիսամյակային վճարի համար

գ) Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մասնակցության համար տրամադրել 0,5 միլիոն դրամ

դ) Գյուղական միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար տրամադրել խիճ և ավագ:

2.1.1 25.10. 2016թ. N Պ-547 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները Ընկերությունը չի կատարել 2016 և 2017թթ.:

2018թ. մանկապարտեզի և դպրոցների շենքերի վերանորոգման համար Մեղրիի համայնքապետարանին է փոխանցել 0,5 միլիոն դրամ, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մասնակցության համար՝ 0,5 միլիոն դրամ և 0,25 միլիոն դրամ՝ մեկ ուսանողի կիսամյակային վճարի համար:

2.2. Բնապահպանական պարտավորությունների մասին

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:

4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պահանջների կատարումը:

5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.1 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

- Չի փոխվել հողերի գործառնական նշանակությունը:
- Ապահովվել է օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից

համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը, նախորդ տարիների համար նույնպես 2018թ. վճարել է 849827 դրամ:

- Չի իրականացրել և ՀՀ շրջակա միջավայրի (ՇՄ) նախարարություն չի ներկայացրել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվություններ³ /խախտել է ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 191-Ն որոշման պահանջները/:

2.3 Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների մասին

1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված են հանքի փակումից հետո աշխատուժի մեղմացման միջոցառումներ (վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար և այլն):

1.2 Փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումներ:

1.3 Համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն:

1.3 Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և ներկայացնել լիազոր մարմին:

2. Սույն պայմանագրի թիվ 2 հավելվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումները սահմանված չափով և ժամկետներում չկատարելու դեպքում այն կհամարվի պայմանագրային պարտավորությունների խախտում և կկիրառվի օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ, հանքի փակման աշխատանքներ

ը/կ	Միջոցառումների անվանումը	Ժամկետը	Ներդրումների չափը /հազ.դրամ/
1.	Խախտած հողերի և լցակույտերի տեխնիկական ռեկուլտիվացում	17 օր	3325.0
2.	Ժամանակավոր շինությունների քանդում	20 օր	190.0
3.	Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում	15 օր	152.0
4.	Մշտադիտարկման իրականացում	5 տարի	4895.0
5.	Նախազգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում	10 օր	98.0

³ <http://www.mnp.am/am/pages/233>

3. «Ղարազույյաններ» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշներն՝ ըստ ԱՃԹՆ հաշվետվությունների⁴

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Գունավոր մետաղների հանքաքար	0	0	0
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց.	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց.	Հշվրկ.՝ 142508 Վճր. 0 Հշվնց.
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 12992 Վճր. 10000 Հշվնց. 0	Հշվրկ. 6270 Վճր. 9000 Հշվնց. 0	Հշվրկ. 4848 Վճր. 4345 Հշվնց. 0
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 25000 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 333 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Ռոյալթի, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Բնապահպանական վճարներ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
ՇԹ պետտուրք, դրամ	Վճր.՝ 10000000	Վճր.՝ 10000000	Վճր.՝ 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Բազային՝ 9891560, Հշվրկ.՝ 1483434 Վճր.՝ 0	Բազային՝ 9891560, Հշվրկ.՝ 233511 Վճր.՝ 0	Բազային՝ 9891560, Հշվր.՝ 233511 Վճր.՝ 1717245
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	Բազային՝ 4895000, Հշվրկ.՝ 734250 Վճր.՝ 0	Բազային՝ 4895000, Հշվրկ.՝ 115577, Վճր.՝ 0	Բազային՝ 4895000 Հշվրկ.՝ 115577 Վճր.՝ 849827
Գույքահարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Հողի հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Վարձակալություն (Հողամաս), դրամ, Մեդրի համայնք	Վճր.՝ 1302450	0	0
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0

⁴ <https://reports.eiti.am/hy/>

Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Տույժեր	0	0	0
Տուգանքներ	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն	1. Մասնակցություն գյուղի դպրոցի և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին՝ 500000 դրամ: 2. Մասնակցություն համայնքի զարգացման սոցիալ-տ նտեսական ծրագրերին՝ 500000 դրամ 3. Մեկ ուսանողի կ խսամյակային ուսման վճարի տր ամադրում՝ 250000 դրամ 4. Մասնակց ություն գյուղ ամիջյան և միջհամայն քային նշան ակության ավտոճան ապարհներ ի վերանոր ոգման աշխատանքներ՝ խճի, ավազի տրամադրում	1. Մասնակցություն գյուղի դպրոցի և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին՝ 500000 դրամ: 2. Մասնակցություն համայնքի զարգացման սոցիալ-տ նտեսական ծրագրերին՝ 500000 դրամ 3. Մեկ ուսանողի կ խսամյակային ուսման վճարի տր ամադրում՝ 250000 դրամ 4. Մասնակց ություն գյուղ ամիջյան և միջհամայն քային նշան ակության ավտոճան ապարհներ ի վերանոր ոգման աշխատանքներ՝ խճի, ավազի տրամադրում	1. Մասնակցություն գյուղի դպրոցի և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին՝ 500000 դրամ:
Բարեգործական հատկացումներ	0	0	1. Մանկապարտեզի և դպրոցների շենքերի վերանորոգման համար՝ 500000 դրամ 2. Մեկ ուսանողի կխսամյակային ուսման վճարի՝ 250000 դրամի տրամադրում
Ոչ ֆինանսական օգն.	0	0	0
Աշխատատեղեր	1 մարդ	1 մարդ	1 մարդ
Անհատույց օտարումներ	0	0	0

4. «Ղարագույաններ» ՓԲ ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, 2018թթ համար

2016 թվականին, ըստ Ընկերության հաշվետվության, հողամասի վարձակալության դիմաց վճարը կազմել է 1302450 դրամ, մինչդեռ այն, ըստ ՏԿԵ նախարարության հաշվետվության, կազմել է 970650 դրամ: ՏԿԵ նախարարության այդ տարվա հաշվետվության մեջ նշված է, որ Ընկերության կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները չի կատարել⁵, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ նշված է, որ ամբողջովին կատարել է:

Ըստ ընդերքօգտագործման պայմանագրի՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար ստանձնած պարտավորությունների կատարման մասով նույն հակասությունները կան նաև 2017թ. հաշվետվությունների մեջ⁶:

2018թ. հողամասի վարձակալության համար վճար չի նշվել Ընկերության հաշվետվության մեջ, մինչդեռ, ըստ ՏԿԵ նախարարության հաշվետվության, վճարել է 1200000 դրամ⁷:

Տարբերություններ կան ՇՄ նախարարության և Ընկերության հաշվետվությունների մեջ: 2017 թվականի ՇՄ նախարարության հաշվետվության⁸ մեջ տվյալ տարվա մշտադիտարկումների հաշվարկային մեծություն է նշված 102800 դրամը, Ընկերության հաշվետվության մեջ՝ 115577 դրամը:

2018թ. Պետական եկամուտների կոմիտեի հաշվետվության⁹ մեջ նշվում է, որ այդ տարի Ընկերությունը չի վճարել ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը, Ընկերության հաշվետվության նույն տարվա հաշվետվության մեջ նշված է, որ այն մուծված է:

2016-2017թթ. Պետական եկամուտների կոմիտեի և Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունների մեջ տարբերություններ չկան:

Բոլոր դեպքերում առկա է Ընկերության և պետական մարմինների ԱԹՃՆ հաշվետվությունների համադրելիության խնդիր:

5. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Ղարագույաններ» ՓԲԸ-ի և Պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների համաձայն՝ Ընկերությունը 2016-2018 թվականներին բնապահպանական վճար չի հաշվարկել և չի վճարել պետական բյուջե:

⁵ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=2:>

⁶ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/>

⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2:>

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=1>

⁹ [file:///C:/Users/user/Downloads/%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5-2018%20\(25\).pdf](file:///C:/Users/user/Downloads/%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5-2018%20(25).pdf)

Մինչ 2020 թ-ը «Ղարագույաններ» ՓԲԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում նշված կազմակերպությունների ցանկում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Մեղրի համայնքը տեսականորեն չէր կարող օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար տրվող պետական սուբսիդիաներից: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը¹⁰, ըստ որի, այնտեղ ընդգրկվեցին բոլոր, մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները, այդ թվում՝ նաև «Ղարագույաններ» ՓԲԸ-ն:

6. Համայնքային զարգացման ծրագրերում «Ղարագույաններ» ՓԲԸ-ի ներգրավվածության մասին

Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում¹¹ ներառված մի շարք ուղղություններից նշվում է համայնքին տնտեսական բարեկեցություն բերող, բնապահպանական նվազ ազդեցությամբ և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերություն (պղինձ, մոլիբդեն, ոսկի, գրանոդիորիտ) ունենալու տեսլականը: Չնայած դրան, ծրագրում լուրջ մտահոգություններ կան տարածաշրջանում հանքարդյունաբերության ոլորտի կողմից համայնքի տարածքների աղտոտվածության նկատմամբ: Նշվում է, որ չնայած տնտեսական շահութաբերությանը, հանքարդյունաբերության զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման: Հատկանշանական է, սակայն, որ համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների շարքում «Ղարագույաններ» ՓԲԸ-ն հիշատակվում է: Մասնավորապես, Ծրագրին համապատասխան անկալվում է, որ «Ղարագույաններ» ՓԲԸ-ի աշխատանքի շնորհիվ կբացվի 184 նոր աշխատատեղ, ինչը կլուծի բնակչության սոցիալական խնդիրների մի մասը:

7. «Ղարագույաններ» ՓԲԸ-ի՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար գումարների ներդրման, մշտադիտարկումների, բնապահպանական և բնօգտագործման հարկերի, պարտադիր այլ վճարների մարման մասին

- Ընկերությունը Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (բազային՝ 9891560) համալրում չի իրականացրել 2016 և 2017թթ. համար, ինչը համապատասխանաբար կազմել է 1483434 և 233511 դրամ: 2018թ. վճարել է 1717245 դրամ:
- Մշտադիտարկումների իրականացման 4595000 դրամ բազային վճարներից 2016 և 2017թթ. չի հատկացրել (այդ տարիների համար հաշվարկային գումարները կազմել են 734250 և 115577 դրամ), իսկ 2018թ. վճարել է 849827 դրամ գումար:
- Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:
- 2016 – 2018թթ. Մեղրի համայնքին գույքահարկ չի վճարել:

¹⁰ <https://www.arlis.am>

¹¹ <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/>

- 2016 – 2018թթ. Մեղրի համայնքին չի վճարել հողի հարկ:
- Հողամասերի վարձակալության դիմաց 2016թ. վճարել է 1302450 դրամ, /ըստ ՏԿԵ նախարարության հաշվետվության՝ 970650 դրամ/, 2017 և 2018թթ. ոչինչ չի վճարել, սակայն, ըստ ՏԿԵ նախարարության հաշվետվության, հողամասի վարձակալության դիմաց Մեղրի համայնքին վճարել է 1200000 դրամ:
- 2016-2018թթ. ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը վճարել է ամեն տարի:
- Փոխադրամիջոցների դիմաց վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- Ռոյալթի չի վճարել:
- Հողի և փոխադրամիջոցների համար գույքահարկ չի վճարել համայնքային բյուջե:

8. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից 2021 թվականի հունվարի 7-11-ը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում ընդերքօգտագործման իրավունքի տիրապետման, սակայն փաստացի գործունեություն չիրականացնող/մասամբ իրականացնող 5 ընդերքօգտագործող կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր այցելության ընթացքում ընդհանուր առմամբ հանդիպել և հարցազրույցներ է անցկացրել տարածաշրջանի 25 բնակչի (8 կին և 17 տղամարդ) հետ, այդ թվում նաև բնակավայրերի վարչական ներկայացուցիչների և Մեղրի խոշորացված համայնքի ներկայացուցիչի հետ: Այցի ընթացքում ստացած տեղեկատվությունը հիմնականում ներառվել է Ծրագրի շրջանակներում կազմված՝ առանձին կազմակերպությունների վերաբերյալ հաշվետվություններում:

Ծրագրի շրջանակներում «Ղարագույաններ» ՓԲԸ-ի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամասի ազդակիր համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացվել են հարցումներ: Հարցման նպատակն էր պարզել ԱՃԹՆ-ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Այցի ընթացքում ստացված տեղեկատվությունը հիմնականում ներառվել է սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- ✓ Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ՝ հարցման մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշում են աշխատատեղերի բացակայությունը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:
- ✓ Հարցվածների մի մասը կողմ է հանքավայրի շահագործմանը, քանի որ աղքատությունից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա, սակայն կարծում են, որ հանքավայրը շահագործող

«Ղարագույյաններ» ՓԲԸ-ն պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերի և պահանջների կատարումը:

- ✓ Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցություն կապը չեն կարողանում միանշանակ գնահատել, քանի որ չեն տիրապետում ստույգ վիճակագրական և հետազոտական տվյալների: Բոլոր դեպքերում հարցվածներին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը: Այդ մասին նշվում է նաև համայնքի զարգացման ծրագրերում:
- ✓ Մեղրի համայնքի կազմի մեջ մտնող գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներն ու բնակիչները իրազեկված չեն Ընկերության կողմից հողի և այլ անշարժ գույքի դիմաց վճարումների գործընթացից: Նրանք նշում են, որ հանքարդյունահանող Ընկերությունն իր գույքահարկը և հողամասերի վարձակալության գումարները վճարում է Մեղրի համայնքային բյուջե, որտեղից էլ ըստ պահանջարկի բաշխվում է հայտատու բնակավայրերին:
- ✓ Վարչական ղեկավարն ու բնակիչները տեղյակ չեն, թե բնակավայրում իրականացվող սոցիալական ծրագրերից որոնք են կատարվել Ընկերության տրամադրած գումարներով:



✓ **Նկարներ 3., 4., 5. Հարցազրույցներ Վարդանիձորում, Մեղրիում, Լեռվազում**

- ✓ Հարցման մասնակիցները կարծում են, որ ներկա փուլում շրջակա միջավայրի աղտոտում տեղի չի ունենում, քանի որ հանքը չի շահագործվում:
- ✓ Ըստ Մեղրիի համայնքապետարանի ներկայացուցչի և բնակավայրի վարչական ղեկավարի՝ իրենք չեն մասնակցել «Ղարագույյաններ» ՓԲԸ-ի ընդերքօգտագործման պայմանագրի կնքման գործընթացին, առավել ևս դրա մաս հանդիսացող համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության հարցերի ձևավորմանը:
- ✓ Առողջական խնդիրներ ունենալու դեպքում բնակիչներն օգտվում են Մեղրիի բուժապասարկման ծառայություններից: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:
- ✓ ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Մեղրի խոշորացված համայնքապետարանի Մեղրի համայնքի կազմակերպական բաժնի պետը /Վանիկ Սարգսյան/ նշեց, որ, հայ-

ադրբեջանական պատերազմի բացասական հետևանքների փորձից ելնելով, առաջնային է Մեդրի-Երևան ճանապարհի անվտանգության ապահովումը, ինչպես նաև Տաթև-Երևան ճանապարհի բարեկարգումն այնպես, որ ապահովի բեռնատար ծանրաքարշ մեքենաների երթևեկությունը: Նա նշեց նաև, որ զինադադարի պայմաններում համայնքում առաջացել են հրատապ լուծման ենթակա նոր քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման, Արցախից տեղահանվածների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ:

- ✓ Ըստ հարցվածների՝ հայ-ադրբեջանական սահմանագատման գոտում հանքավայրեր և նրանց ենթակառուցվածքներ չկան:
- ✓ Ըստ Մեդրի համայնքի Լեհվազ-Վարդանիձոր /Այգեձոր, Թիկուտ/ բնակավայրերի վարչական ներկայացուցչի /Ռաֆիկ Մկրտչյան/ նոր պայմաններում հանքավայրերի շահագործումն իրատեսական է, եթե ներդնողը գնա ռիսկի: Ցանկալի է, որ աշխատեն, որպեսզի տնտեսությունը զարգանա: Եթե հանքավայրը նորմալ աշխատեր, երևի թե բնակիչները կաշխատեին, եկամուտ կունենային, կմնային գյուղում:
- ✓ Հարցումներից պարզ դարձավ, որ ընդհանրապես բացակայում է բնակավայրերի տարածքում գործունեություն իրականացնող ընդերքօգտագործող ընկերությունների, այդ թվում նաև «Ղարագույաններ» ՓԲԸ-ի համագործակցությունն ազդակիր բնակավայրերի հետ, և որ այդ ընկերությունները նույնիսկ ոչ մասնագիտական աշխատանքներում չեն ներգրավում բնակավայրերի բնակիչներին:
- ✓ Հարցման մասնակիցները տեղյակ չէին ԱՃԹՆ գործընթացներից:

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման ոլորտում ազդակիր բնակավայրերի բնակիչների առաջարկները

1. Բնակիչներին ապահովել մաքուր խմելու ջրով:
2. Գյուղական բնակավայրերում հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
3. Ուժեղացնել ազդակիր բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող հանքարդյունահանող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության և համագործակցության մեխանիզմները:
4. Հանքավայրը շահագործել բացառապես շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ապահովման համար սահմանված նորմատիվներին և չափաքանակներին համապատասխան:
5. Քանի որ հանրային լսումներին ներկայացված բնապահպանական միջոցառումներից որևէ մեկը գործնականում չի կատարվում, հանքարդյունահանման ծրագրերի հաստատման գործընթացում ներկայացնել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանն ուղղված գործուն և կատարման համար իրատեսական բնապահպանական ծրագրեր:

Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման ժամանակ պայմանագրի մաս հանդիսացող՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված

պարտավորությունների ձևավորման գործընթացին անպայման մասնակից դարձնել համայնքապետարանների ղեկավարներին և ազդակիր բնակավայրերի վարչական ներկայացուցիչներին, այդ բաղադրիչում ներառել նրանց պահանջներն ու կարիքները:

2. Ապահովել միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների կազմակերպումը:
3. Ապահովել միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցությունը:
4. Որպես բնակավայրերի զարգացման հեռանկարներ դիտարկել զբոսաշրջությունը, պահածոների և չոր մրգերի փոքր արտադրամասերի կազմակերպումը, փոքր գյուղատնտեսության զարգացումը:
5. Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքները, վարչական շենքերը, դպրոցները համալրել նոր և պիտանի անհատական պաշտպանական պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակն ու անվտանգությունը, զոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն
 - արդյունահանման աշխատանքներ մինչ օրս՝ չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մաս /
 - չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը
 - չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը
 - ազդակիր բնակավայրերի բնակիչներին չի իրազեկել սոցիալական ծախսերի մասով ստանձնած պարտավորությունների մասին
 - իր օգտագործած շարժական մեքենաների համար սահմանվող գույքահարկի դիմաց վճարումներ չի կատարել չնայած նրան, որ դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում է տեղի բնակչությունը:
2. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված՝ 184 աշխատատեղերի բացման հեռանկարը: 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր Վարդանիձորի բնակավայրը զրկվել է ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
3. Ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն ԱՃԹՆ գործընթացների մասին:
4. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: